Կալիֆոռնիայի

Ընդհանուր Հիմնական
Չափանիշներ

Ձեռնարկ ծնողների համար



Ռալֆ Վալդո Էմերսոն

Ներածություն

Այս գրքույկը ծանոթացնում է ծնողներին Կալիֆոռնիայի Ընդհանուր Հիմնական Չափանիշների հետ և ամփոփում է այն ինչ աշակերտը պետք է սովորի տվյալ դասարանում: Չափանիշները կերտված են արտացոլելու այն գիտելիքները և հմտությունները, որոնք հարկավոր են նրանց համալսարան ընդունվելիս և մասնագիտություն ընտրելիս: Մի շարք ընդհանուր կրթական նպատակները օգնում են ուսուցիչներին և ծնողներին, համոզված լինելու, որ աշակերտները մարտահրավեր են ստանում և առաջադիմում են:

Ինչու՞ Ընդհանուր Հիմնական Չափանիշներ:

Կալիֆոռնիայի նահանգի մանկավարժները ազգային շարժմանն են միացել ընդունելու անգլերեն լեզվի և մաթեմատիկայի դասավանդման ընդհանուր չափանիշները: Դրանք թույլ են տալիս համագործակցել լավագույն մասնագիտական փորձը և վերապատրաստումը տարածելու համար:

Ուսուցման ընդհանուր նպատակը հստակ պատկերացում է տալիս այն մասին, թե ինչի են ձգտելու մանկավաժները և ծնողները: Կրթական այս նպատակները օգնում են աշակերտներին հասնել համալսարան ընդունվելու և աշխատանքի փորձ ձեռք բերելու սպասումներին, պատրաստ են հաջողության հասնելու համաշխարհային տնտեսության և հասարակության ոլորտներում և ապահովված են բարդ բովանդակությամբ և գիտելիքների բարձր կիրառմամբ: Միջազգային չափանիշներին համապատասխանելով, Ընդհանուր Հիմնական Չափանիշները օգնում են աշակերտներին պատրաստվել Կալիֆոռնիայի պետական համալսարան ընդունվելու պահանջներին:

Կալիֆոռնիայի Ընդհանուր Հիմնական Չափանիշների ընդունումը:

2010 թվականի օգոստոսին ընդունված, մանկապարտեզից մինչև 12-րդ դասարանի Ընդհանուր Հիմնական Չափանիշները մշակվել են նահանգի կողմից առաջնորդված ջանքերով անգլերեն լեզվի և մաթեմատիկայի հետևողական և հստակ կրթական չափանիշներ հաստատելու նպատակով: Այն նախաձեռնվել է Պետական բարձրագույն դպրոցի պաշտոնյաների և Ազգային կառավարիչների կազմակերպության կողմից: Ընդհանուր Հիմնական Չափանիշների ընդունման ընթացքում, Կալիֆոռնիայի նահանգը ավելացրել է լրացուցիչ չափանիշներ՝ Կալիֆոռնիայի նահանգի աշակերտների յուրահատուկ կարիքները բավարարելու համար:

Ընդհանուր Հիմնական Չափանիշները ամրապնդեցին գոյություն ունեցող Կալիֆոռնիայի կրթական չափանիշները, ներառնելով լրացուցիչ չափանիշներ բառապաշարի հարստացման և նոր չափանիշներ համատեղ քննարկման համար: Գրագիտության չափանիշները, որոնք կենտրոնացված են ընթերցանության և

պատմության/հասարակագիտության գրավոր աշխատանքի, գիտության և տեխնոլոգիայի վրա, նույնպես ընդգրկված էին: Մաթեմատիկայի չափանիշները ընդգրկում են ուժեղ շեշտադրություն թվային իմաստի և հանրահաշվական մտածելակերպի համար:

Չափանիշների կազմակերպում

Ներկայացված տեղեկատվությունը պարունակում է բովանդակության ամփոփում և այդ մակարդակով զարգացրած հմտությունների ամփոփագիր: Անգլերեն լեզվի քերականության, Կալիֆոռնիայի Ընդհանուր Հիմնական Չափանիշները կազմված են հետևյալ 4 խմբից. (1) կարդալ, (2) գրել, (3) խոսել և լսել և (4) լեզու:

Մաթեմատիկան ներառնում է մաթեմաթիկական չափանիշների պրակտիկան, որը վարքագծի մի ամբողջություն է, որ ամեն աշակերտ պետք է ձեռք բերի: Այս պրակտիկան խորացնում է մաթեմատիկայի հասկացությունը և բարձրացնում է աշակերտների խնդիրներ լուծելու ունակությունները:

Մաթեմատիկա / Չափանիշներ մաթեմատիկայի համար

Մաթեմատիկական պրակտիկայի չափանիշները նկարագրում են այն հատկանիշների, որոնք աշակերտները ձեռք են բերեում Ընդհանուր Հիմնական Չափանիշները սովորելուց հետո: Այս պրակտիկան հիմնված է կարևոր «զործընթացի և հմտության» վրա. ներառնելով խնդիրներ լուծելը, հիմնավորելը և ապացուցելը, կապը, ներկայացնելը և կապեր հաստատելը: Այս պրակտիկան թույլ կտա աշակերտներին հասկանալ և վստահությամբ կիրառել մաթեմատիկան:

- Հասկանալ խնդիրները և հաստատակամորեն լուծել դրանք:
  - Գտնել խնդրի իմաստը
  - Վերլուծել, կանխագուշակել և գտնել լուծման ուղիները
  - Ստուգել պատասխանները
  - Հարցեր տալ ինքներդ քեզ. «Այդյո՞ք այն իմաստ է արտահայտում»:

- Անուղղակիորեն և քանակականորեն պատճառաբանել:
  - Հասկանալ քանակը և նրա կապը խնդիրներում
  - Կերտել համահունչ խնդիրներ

- Կառուցել կենսունակ փաստարկներ և քննադատել ուրիշների հիմնավորումները:
  - Հասկանալ և օգտագործել տեղեկատվությունը փաստարկներ կառուցելու համար
  - Կատարել և ուսումնասիրել ենթադրությունների ճշտությունը
  - Հիմնավորել եզրակացությունները և պատասխանել ուրիշների փաստարկներին

- Օրինակ բերել մաթեմատիկայի օգնությամբ:
  - Կիրառել մաթեմատիկան ամենօրյա կյանքում

- Ճանաչել քանակը գործնական պարապմունքների ժամանակ
- Մեկնաբանել արդյունքները իրավիճակներում և անդրադառնալ, թե արդյո՞ք արդյունքները իմաստ են արտահայտում

- Համապատասխան միջոցները օգտագործել: Use appropriate tools strategically.
  - Հաշվի առնել խնդիրների լուծման համար առկա միջոցները
  - Ծանոթանալ դասարանին համապատասխան միջոցների հետ (մատիտ և թուղթ, բետոնային մոդելներ, քանոն, փոխադրիչ, հաշվիչ մեքենա, աղյուսակներ, համակարգչային ծրագրեր, թվային բովանդակություն կայքի կամ այլ տեխնոլոգիական միջոցի վրա):


- Լինել ճշգրիտ/ստույգ:
  - Ճշգրտորեն հաղորդակցվել ուրիշների հետ:
  - Օգտագործել պարզ սահմանումներ, նշել խորհրդանիշների իմաստը և զգուշությամբ նշել չափման միավորները և պիտակավորել առանցքները
  - Հաշվարկել ճշգրիտ և արդյունավետ ձևով

- Փնտրել . օգտագործել կառուցվածք:
  - Տարբերել օրինակները և կառուցվածքները
  - Հետ նայել ամփոփելու համար և փոխել հեռանկարը
  - Բարդ բաները տեսնել առանձին- առանձին կամ բաղկացած լինել մի քանի օբյեկտներից
- Փնտրել և գտնել խնդիրները լուծելու ավելի հեշտ ու կարճ ճանապարհներ:
  - Երբ հաշվարկները կրկնվում են, փնտրել օգտագործման ընդհանուր մեթոդներ, հրահանգներ և կարճ ճանապարներ
  - Կարողանալ հասկանալ, թե արդյո՞ք պատասխանը իմաստ է արտահայտում

Մանկապարտեզ – Վերանայում / մաթեմատիկա


Մանկապարտեզի աշակերտները սովորում են հաշվել մինչև 100 և գրել թվերը մինչև 20: Ուշադրությունը ուղղված է 11-20 թվերի վրա, որտեղ շեշտը դրում է տասնորդական մասի և դրա հասկացության վրա: Գումարումը և հանումը սովորում են մանկապարտեզում: Աշակերտները տեսակավորում և խմբավորում են առարկաների խմբեր և ճանաչում երկրաչափական պարզ պատկերներ:

- Ճանչել թվերը և կարողանալ հաշվել միչև 100:
- Կարողանալ գրել 0-20 թվերը:
- Ճանչել 11-20 թվերը, միավոր և տասնորդական մասերով:
- Հաշվել առարկաները և կարողանալ իմանալ, թե քանի առարկա կա խմբում, մինչև 20 թիվը:
- Համեմատել թվերը և խմբերը:



Ո՞ր խումբը ավելի շատ առարկա է պարունակում: Ո՞րն է ավելի քիչ պարունակում:
Հավասար են իրար:

- Հասկանալ, որ գումարել նշանակում է առարկաները իրար հետ հաշվել և ավելացնել խմբին:
- Հասկանալ, որ հանումը բաժանում է խումբը և պակասեցնում է խմբից:
- Սահունորեն գումարել և հանել մինչև 5 թիվը:
- Հասկանալ ժամը (առավոտ, կեսօր, երեկո և այլն):
- Ճանչել ժամը հաշվող սարքերը (ժամացույց, օրացույց և այլն):
- Տեսակավորել առարկաները ըստ խմբերի:



1-ին դասարան – Վերանայում / մաթեմատիկա

Առաջին դասարանի աշակերտները ընդլայնում են իրենց գումարման և հանման հասկացությունները սովորելով, թե ինչպես մինչև 20 թիվը գումարել և հանել խնդիրներ լուծելիս: Նրանք հասկանում են «հավասար է» նշանի իմաստը և ակնկալվում է, որ կարող են հաշվել մինչև 120 թիվը: Տեղի հասկացությունը ավելի խորությամբ է հասկացվում և երեխան օգտագործում է այն համեմատելու երկնիշ թվերը մինչև 100: Աշակերտները օգտվում են իրենց չափելու հմտություններից և սկսում են կազմակերպել հարցաթերթիկներից ստացած տվյալները: Աշակերտները կարողանում են նաև ժամն ասել և գրել այն, ցուցադրելով ժամը և րոպեն, ինչպես սովորական ժամացույցով, այնպես էլ թվային ժամացույցով:


- Մինչև 20 թիվը ընկած գումարման և հանման խնդիրներ լուծել
- Հասկանալ գումարման և հանման միջև ընկած հարաբերությունը
- Կիրառել գործողություններ
    - Փոխարինող գործողությունների հատկությունները.
      Եթե 8+3=11, ապա գիտես որ 3 + 8 = 11
    - Գումարման ասոցիատիվ հատկությունները.
      2+6+4 գումարելու համար, կարող ես վերջին 2 թվերը գումարել իրար 10 ստանալու համար, հետո 2 + 6 + 4 = 2 + 10 = 12

- Գումարել և հանել մինչև 20
- Հաշվել մինչև 120, ցանկացած թվից սկսած
- Հասկանալ «հավասար է» նշանի իմաստը
- Հասկանալ թվի տեղը. միավոր, տասնավոր
- Օգտվելով թվի տեղից գումարել և հանել մինչև 100
- Չափել երկարությունը և ասել չափսը
- Ասել և գրել ժամը
- Կապել ժամը օրվա ընթացքի հետ (առաջ/հետո, կրաճ/երկար և այլն)

2-րդ դասարան – Վերանայում / մաթեմատիկա

2-րդ դասարանի աշակերտները օգտագործում են գումարում և հանում մինչև 100 թիվը խնդիրներ լուծելու համար և պետք է անգիր հիշեն 2 միանիշ թվերի գումարը մինչև տարվա վերջ: Թվերի տեղի արժեքի հասկացությունը կհասնի մինչև 1000 թվին և աշակերտները կհամեմատեն եռանիշ թվեր, հիմնվելով միավոր, տասնորդական, հարյուրերորդական թվերի մասին ունեցած գիտելիքների վրա: Նրանք հաշվում են նաև, դրամ և սովորում են գնահատել և համեմատել երկարությունը օգտագործելով համապատասխան չափիչ սարքեր: 2-րդ դասարանցիները վերամշակում են երկրաչափության մասին ունեցած հասկացությունը, գծագրելով երկրաչափական պատկերներ՝ հիմնված կողմերի և անկյունների վրա:

- Մինչև 100 թիվը լուծել գումարման և հանման խնդիրներ
- Սահունորեն գումարել և հանել մինչև 20 թիվը
- Իմանալ բոլոր 2 միանիշ թվերի գումարը
- Աշխատել հավասար առարկաներ ունեցող խմբերի և կրկրնվող գումարի հետ բազմապատկումը հասկանալու համար



- Աշխատել հավասար խմբերի և կրկրնվող հանվող թվերի հետ բաժանումը հասկանալու համար
- Հասկանալ թվի արժեքը. միավոր, տասնավոր և հարյուրերորդ
- Օգտագործել թվի արժեքը մինչև 100 թիվը գումարելու և հանելու համար
- Մոտավոր հաշվարկ անել օգտվելով թվի արժեքից
- Չափել, մոտավորապես հաշվել և համեմատել երկարությունը ստանդարտ միավորներով
- Ներկայացնել ամբողջական թվերը թվերի առանցքի վրա
- Աշխատել ժամի հասկացության և դրամի հետ
- Իմանալ ժամանակի հարաբերությունները (ժամի մեջ եղած րոպեները, ամսվա մեջ եղած օրերը և այլն)
- Լուծել խնդիրներ օգտագործելով դոլլար և սենթ

3-րդ դասարան – Վերանայում / մաթեմատիկա

3-րդ դասարանի աշակերտները սկսում են հասկանալ բազմապատկումը և բաժանումը և սովորում են սահունորեն բազմապատկել և բաժանել մինչև 100 թիվը: Աշակերտները պետք է անգիր իմանան բոլոր 2 միանիշ թվերի բազմապատկման արդյունքը մինչև 3-րդ դասարանի վերջը: Թվի արժեքի հասկացությունը օգտագործվում է բազմանիշ թվերի հաշվարկների ժամանակ: 3-րդ դասարանում, երեխաները ծանոթանում են կոտորակների հետ, շեշտը դնելով այն հասկացության վրա, որ կոտորակներին պետք է նայել ինչպես թվերի, նրանց մեծության և թվերի առանցքի տեղաբաշխմամբ: 3-րդ դասարանում, երեխաները սովորում են նաև մակերեսի, շրջանագծի մասին և լուծում խնդիրներ օգտագործելով հեղուկ ծավալ և զանգված հասկացությունները:

- Լուծել խնդիրներ, որոնք պարունակում են բազմապատկում և բաժանում
- Հասկանալ բազմապատկման հատկությունները
    - Բազմապատկման լոմուտացիոն հատկությունները.
      Եթե գիտես 6 x 4 = 24, ապա դու գիտես, որ 4 x 6 = 24

    - Բազմապատկման ասոցիատիվ հատկությունները.
      3 x 5 x 2-ի արդյունքը կարելի գտնել կատարելով 3 x 5 =15, հետո 15 x 2 = 30,
      կամ 5 x 2 = 10, հետո 3 x 10 = 30


    - Բազմապատկման բաշխիչ հատկությունները.
      Եթե 8 x 5 = 40
      և 8 x 2 = 16,
      ուրեմն 8 x 7-ը
      8 x (5 x 2)
      (8 x 5) + (8 x 2)
      40 + 16 = 56

- Սահունորեն բազմապատկել և բաժանել մինչև 100 թիվը
- Իմանալ բոլոր 2 միանիշ թվերի արդյունքը
- Գումարման, հանման, բազմապատկման և բաժանման օգնությամբ խնդիրներ լուծել
- Հասկանալ, որ բազմապատկումը և բաժանումը կապված են իրար հետ
- Օգտվել թվի արժեքից թվերը կլորացնելու համար և իմանալ քառանիշ թվի յուրաքանչյուր նիշի արժեքը
- Օգտվել թվի արժեքի հասկացությունից բազմանիշ թվաբանական արտահայտությունն լուծելու համար

4-րդ դասարան – Վերանայում / մաթեմատիկա

4-րդ դասարանում երեխաները օգտագործում են թվի արժեքի հասկացությունը ընդհանրացնելու այն մինչև 1, 000, 000 և սովորում կլորացնել բազմանիշ լրիվ թվերը ցանկացած արժեքի: Օգտագործելով ստանդարտ ալգորիթմ, նրանք սահունորեն գումարում են և հանում, բազմապատկում են ու բաժանում բազմանիշ թվերով: 4-րդ դասարանցիները ընդլայնում են կոտորակների իմացությունը, ներառնելով հավասարարժեքությունը, կարգը և հասարակ տասնորդական թվերը: Աշակերտները չափում են անկյունը և դասակարգում երկրաչափական մարմինները կողմերով (զուգահեռ, ուղղահայաց և այլն) և անկյուններով (ուղիղ, սուր, բութ և այլն):

- Խնդիրներ լուծելու համար, օգտվել ամբողջ թվերի գումարումից, հանումից, բազմապատկումից և բաժանումից
- Սովորել գործոններ և բազմապատիկներ
    - 24 թվի գործոններն են. 1, 2, 3, 4, 6, 8, 12
    - 4 թվի բազմապատիկներն են. 4, 8, 12, 16, 20
- Առարկաների և թվերի օգնությամբ օրինակներ կերտել և նկարագրել
- Հասկանալ և օգտագործել արժեքի հասկացությունը ընդհանրացնելու մինչև 1,000,000
    - Ընդլայնել. 6783 = 6000 + 700 + 80 + 3
- Բազմանիշ թվերով հաշվարկներ կատարել
- Լուծել խնդիրներ բազմանիշ թվերը երկնիշ թվերով բազմապատկելու միջոցով
- Բաժանել բազմանիշ թվերը միանիշ թվերի վրա
- Կլորացնել բազմանիշ թվերը ցանկացած արժեքի
- Հավասար կոտորակների և կարգի հասկացություն ձեռք բերել



- Համեմատել տարբեր համարիչ և հայտարար ունեցող երկու կոտորակներ, գտնելով ընդհանուր հայտարարը
- Գումարել և հանել կոտորակները և նույն հայտարարով խառը կոտորակները
- Հասկանալ կոտորակների տասնորդական արժեքը
- Համեմատել տասնորդական թվերը
- Լուծել խնդիրներ օգտագործելով չափման փոխարկումից
- Կիրառել մակերեսի և շրջանագծի բանաձևեր ուղղանկյան համար
- Դասակարգել և բացատրել տվյալները օգտագործելով գծի հատկանիշը

5-րդ դասարան – Վերանայում / մաթեմատիկա

5-րդ դասարանի աշակերտները սահունորեն գումարում են, հանում, բազմապատկում և բաժանում բազմանիշ թվերը: Նրանք կիրառում են կոտորակների հանդեպ ունեցած իրենց հասկացությունը, տարբեր հայտարարով կոտորակների գումարման և հանման, բազմապատկման և բաժանման, ինչպես նաև տասնորդական թվերի գումարման և հանման ընթացքում: Նրանք վերլուծում են թվային օրինակներ, գույգերով պատկերված աղյուսակներ և նրանց հարաբերությունը կորդինատային հարթության վրա: Աշակերտները ընդլայնում են երկրաչափական մարմինների հասկացությունները՝ ճանաչելով նրանց հատկանիշները և հաշվելով ներքին անկյունները և եռանկյուննիների ու զուգահեռանիստների մակերեսը:

- Գրել և հաշվել թվային արտահայտություններ օգտագործելով փակագծեր, առանձնացնող նշաններ և մեծ փակագծեր
    - «8-ին գումարել 7, հետո բազմապատկել 2-ով» - 2(8 + 7)
- Արտահայտել (2-50) լրիվ թիվը, որպես սկզբնական թվերի արդյունք
- Նկարագրել ավելի բարդ օրինակներ, ցույց տալով տարբերությունը

4 +6
10 +6
16 +6
22 +6
28 +6
34 +6
40 +6
46 +6
52

- Հասկանալ թվի արժեքը հազարերորդից մինչև միլիոներորդ
- Սահունորեն բազմապատկել բազմանիշ թվեր օգտագործելով ստանդարտ ալգորիթմ
- Բաժանել բազմանիշ թվերը երկնիշ թվերի վրա
- Ճանաչել, գրել և համեմատել տասնորդական թվերը մինչև հարզարերորդ արժեքը
- Կլորացնել տասնորդական թվերը մինչև ամենամոտ թիվը
- Հաշվարկել բազմանիշ ամբողջ թվերով և մինչև հարյուրերորդ տասնորդական թվերով

423.12 × 8

8943.43 + 17.50

32)528

100 - 42.11 =

- Գումարել և հանել տարբեր հայտարար ունեցող կոտորակներ
- Բազմապատկել կոտորակները խառը թվերով

Մանկապարտեզ – Վերանայում / անգլերեն լեզվի քերականություն

Մանկապարտեզի աշակերտները աշխատում են հուշման և աջակցության միջոցով գրականության կամ տեղեկատու տեքստի հետ հարցու պատասխանի, մանրամասնությունների և կարևոր դեպքերի հետ ծանոթանալու միջոցով: Աշակերտները ճանաչում են և կարող են արտասանել բոլոր տառերը և կարող են տպատառով գրել որոշ տառեր: Նրանք կարող են կարդալ պարզ բառեր և նկարել, պատմել կամ գրել որև գրքի մասին:

Ընթերցանություն
Հուշման և աջակցության միջոցով.

- Հարցեր տալ ու պատասխանել հարցերին կարդացածի վերաբերյալ
- Ճանաչել գրքի հերոսներին, տեղը և գլխավոր իրադարձությունները
- Մանրամասնություններով պատմել պատմվածքները

Ընթերցանություն. հիմնային հմտություններ

- Հասկանում է տպատառ գրելու իմաստը
    - Ձախից աջ
    - Վերևից ներքև
    - Էջ առ էջ

- Ճանաչել և թվել բոլոր մեծատառերը և փոքրատառերը
- Իմանալ, որ բանավոր խոսքը կազմված է վանկերից և հնչյուններից
- Ճանաչել և կարողանալ ասել հանգավորված բառեր
- Իրար կապել 2 կամ 3 հնչյուններ իմացած բառերը ստանալու համար
- Ընթերցելիս օգտվել հնչերանգից
- Իմանալ ամենահաճախակի օգտագործվող հնչյունը յուրաքանչյուր բաղաձայնի և ձայնավորի համար
- Կարդալ պարզ ամենահաճախակի ոգտագործվող բառերը
    - Ես, դու, էր, էին, քո, դեպի

Գրավոր աշխատանք

- Նկարել, պատմել կամ գրել որևէ գրքի մասին
- Նկարել, պատմել կամ գրել գրքում կատարված դեպքի մասին

Խոսել և լսել

- Մասնակցել բանավեճերին
    - Լսել ուրիշներին
    - Հերթով խոսել
- Հետևել հրահանգներին
- Հարց տալ ու պատասխանել հարցերին
- Մանրամասնությամբ նկարագրել մարդկանց, վայրը, առարկաները և դեպքերը

1-ին դասարան – Վերանայում / անգլերեն լեզվի քերականություն

Առաջին դասարանի աշակերտները ինքնուրույն կերպով ծանոթանում են գրականության կամ տեղեկատու տեքստի հետ հարց ու պատասխանի միջոցով և կարողանում են խոսել մանրամասնությունների և կարևոր դեպքերի մասին: Նրանք կարող են բարձրաձայն, ճիշտ և արտահայտիչ ձևով կարդալ: 1-ին դասարանի աշակերտները կարող են տպատառերով գրել բոլոր տառերը և նույնիսկ դեպքեր, թեմայի և իրենց կարծիքի վերաբերյալ:

Ընթերցանություն

- Հարց տալ և պատասխանել հարցերին կարդացածի վերաբերյալ
- Մանրամասնորեն պատմել պատմվածքները
- Բացատրել տարբերությունը պատմվածքի և տեղեկատու տեքստի միջև
- Հուշման և աջակցության միջոցով, կարդում են 1-ին դասարանի տեղեկատու տեքստ

Ընթերցանություն. հիմնային հմտություններ

- Հասկանում է տպատառ գրելու կազմակերպումը և հիմնական հատկանիշները
    - Ձախից աջ
    - Վերևից ներքև
    - Էջ առ էջ

- Հասկանում է նախադասության հատկանիշները
    - Մեծատառերով գրելը
    - Նախադասության վերջում դրվող կետադրությունը

- Հասկանում է բանավոր խոսքը, վանկերը և հնչյունները
- Հասկանում է հնչերագը և բառերի վերլուծությունը
    - Գիտի, որ յուրաքանչյուր վանկ ձայնավոր է պարունակում
- Կարդում է մեկ կամ 2 վանկանի պարզ բառեր
- Կարդում է բարձրաձայն ճիշտ և արտահայտիչ ձևով

Գրավոր աշխատանք

- Գրում է իր կարծիքի մասին, որը ներառնում է կարծիք և դրա պատճառը
- Գրում է տեղեկատու աշխատանք, որտեղ նշում է թեման, փաստերի աղբյուրը և վերջաբանը
- Գրում է շարադրանք 1 կամ 2 դեպքերի մասին, ճիշտ հերթականությամբ և մանրամասնորեն

Խոսել և լսել

- Հետևում է խոսակցության օրենքներին, հիմնվելով ուրիշների ասածի և հարցերի վրա
- Հետևում է պարզ 1 կամ 2 քայլ ունեցող հրահանգներին
- Խոսում է օգտագործելով լրիվ նախադասություններ

Լեզու

- Օգտագործում է ճիշտ քերականություն
- Տպատառով է գրում բոլոր մեծատառերը և փոքրատառերը
- Օգտագործում է ճիշտ մեծատառեր, կետադրական նշաններ և ուղղագրություն
- Գտնում է անծանոթ բառերի նշանակությունը նայելով բառի մասերին և նախադասության այլ անդամներին
- Բաժանում է բառերը ըստ տեսակի և սահմանումդրանք ըստ հականիշների
    - Վագրը մեծ, բծավոր կատու է:



3-րդ դասարան – Վերանայում / անգլերեն լեզվի քերականություն

Երրորդ դասարանում աշակերտները ծանոթանում են գրականության և տեղեկատու տեքստի հետ համեմատելով և հակադրելով պատմվածքներ, քննարկելով տեսակետներ և համեմատելով հեղինակի տեսակետի հետ, նկարագրելով դեպքեր, մտքեր և հասկացություններ: Կարդալու հետ միասին, 3-րդ դասարանի գրավոր աշխատանքը ավելի բարդ է: Աշակերտները լավ մշակված, կենտրոնացած, կազմակերպված և խմբագրված գրավոր աշխատանք են կատարում: Տեղեկատու շարադրանքի ընթացքում, նրանք մեջ են բերում աղյուսակներ, դիագրամներ և փաստեր:

Ընթերցանություն

- Նկարագրել, թե ինչպես են հերոսների գործողությունները ազդում դեպքերի վրա
- Համեմատել և հակադրել պատմվածքներ
- Ինքնուրույն կարդալ և հասկանալ դասարանի մակարդակի գրականություն
- Նկարագրել մի քանի իրար հաջորդող դեպքեր, մտքեր և հասկացություններ
- Խոսել տեսակետի մասին և համեմատել հեղինակի կարծիքի հետ

Ընթերցանություն. հիմնային հմտություններ

- Դասարանի մակարդակի հնչյունաբանություն և բառերի վերլուծման հմտություններ
    - Կարդալ բազմավանկ բառեր, օրինակ՝ հեծանիվ, բառարան
- Իմանալ ամենատարածված նախածանցները և վերջածանցները
- Ճիշտ և հասկանալով կարդալ

Գրավոր աշխատանք

- Գրավոր տեսակետ արտահայտել, ներառնելով աղյուսակ, դիագրամ և պատճառներ, կարծիքը հաստատելու համար
- Գրել տեղեկատու շարադրանք, որը նշում է թեմայի անունը, փաստեր բերելն օգտագործել կապող բառեր և դարձվածքներ
- Գրել պատմողական շարադրանք, որը ներկայացնում է պատմող անձ և հետոսներ, և գրել, թե ինչ են ասել, մտածել և զգացել հերոսները

Խոսել և լսել

- Հետևել խոսակցության օրենքներին, հիմնվելով այլ անձանց ասածի վրա
- Հիշել մտքեր և մանրամասնություններ, որի մասին բարձրաձայն կարդացել էին
- Պատրաստել և ներկայացնել տեղեկատու զեկուցում
- Խոսել պարզ և լրիվ նախադասություններով

Լեզու

- Ճիշտ քերականություն օգտագործել
- Ձեռագրով կամ համատեղ շեղագրով ընթեռնելի գրել, օգտվել լուսանցքից և բառերի միջև տարածություն թողնել
- Ուժեղ ազդեցություն թողնելու համար, օգտագործել բառեր և նախադասություններ
- Օգտագործել տարբեր տեսակի նախադասություններ
- Մեծատառերով գրել համապատասխան բառերը
- Ճիշտ կերպով ավելացնել ածանցներ բառարմատներին
    - Գեղեցկորեն, դպրոցական, չգտնել

- Գտնել բանավոր և գրավոր խոսքի տարբերությունները

5-րդ դասարան – Վերանայում / անգլերեն լեզվի քերականություն

Հինգերորդ դասարանի աշակերտները կարդում են երկար բառեր, օգտագործելով բառարմատներ, նախածանցներ և վերջածանցներ անծանոթ բառերի իմաստը հասկանալու համար: Աշակերտները բացատրում են, ինչպես է հեղինակը հիմնավորում իր միտքը: Նրանք ճիշտ կերպով օգտագործում մեջբերումները, երբ խոսում են տեքստի մասին: Գրելիս, աշակերտները, միշտ հիշելով ընթերցողին, պետք է ներառնեն դեպքերի պարզ հերթականություն: Աշակերտները լսում են զեկուցողին կամ մամուլի աղբյուրին և գտնում տրված պատճառը կամ փաստերը, աջակցելու որոշ գծեր: Նրանք ճանաչում ու խոսում են մոլորեցնող գաղափարների մասին:

Ընթերցանություն

- Տեքստի մեջբերումները կատարում են ճիշտ ձևով
- Գտնում են գլխավոր իմաստը և ամփոփում տեքստը
- Համեմատել և հակադրել տեքստը
- Բացատրել, ինչպես է հեղինակը օգտագործում պատճառը և փաստերը որոշ գծեր աջակցելու համար

Ընթերցանություն. հիմնային հմտություններ

- Դասարանի մակարդակին հնչյունաբանություն և բառերի վերլուծության հմտություններ օգտագործել
    - Արմատներ, նախածանցներ և ածանցներ
- Կարդալ ճիշտ և սահունությամբ

Գրավոր աշխատանք

- Գրել կարծիք արտահայտող շարադրանք, աջակցելով պատճառ ու տեղեկություն ունեցող կարծիքը
- Գրել տեղեկատու շարադրանք, որը մտքեր և տեղեկություն է հաղորդում
- Գրել պատմողական շարադրանք, որը կապված է նկարագրող մանրամասների և դեպքերի պարզ հերթականության հետ
- Գրել պարզ և նպատակով, հիշել ընթերցողին
- Տեխնոլոգիա օգտագործել հրատարակչության համար. միանգամից տպել 2 էջ


Խոսել ու լսել

- Ամփոփել տրված տեղեկությունը
- Գտնել պատճառներ և փաստեր, պատմողի և մամուլի կողմից տրված աղբյուրից, որոշ մտքեր աջակցելու համար
- Գտնել և խոսել մոլորեցնող գաղափարների մասին
- Կազմել և ներկայացնել զեկուցում
- Անգիր սովորած պոեմ կամ զեկուցման մի մաս արտասանել
- Օգտագործել արտահայտություն և ձեռքի շարժումներ

Լեզու

- Ճիշտ քերականություն օգտագործել
- Ճիշտ ձևով օգտագործել բայի եղանակները
    - Երեկ ես *քայլում էի*
    - Այսօր ես *քայլում եմ*
    - Վաղը ես *քայլելու եմ*

- Ճիշտ օգտագործել մնծատառեր, կետադրություն և ուղղագրություն
- Կետադրության օգնությամբ մի շարք բառեր, ցուցակի առարկաներ իրարից առանձնացնել
- Վերնագիրը ընդգծել, չակերտների մեջ վերցնել կամ շեղատառերով գրել
- Օգտագործել նախադասությունների տարբեր ձևեր
- Համեմատել և հակադրել գրականության մեջ օգտագործվող տարբեր ոճեր
- Տարբեր մեթոդներով գտնել անծանոթ բառերի իմաստը



Common Core State Standard Links

Տեղեկություն **ծնողների համար** Ընդհանուր Հիմնական Չափանիշների վերաբերյալ - http://www.pta.org/common core state standards.asp

Մանրամասն տեղեկություն Ընդհանուր Հիմնական Չափանիշների վերաբերյալ –

http://www.isbe.state.il.us/common core/default.htm

http://www.corestandards.org/

Կայքեր **տնային աշխատանքի** օգնության վերաբերյալ – Ընդհանուր Հիմնական Չափանիշների համար –

http://www.school.familyeducation.com

http://www.khanacademy.org

http://www.studygeek.org

http://www.washingtonpost.com


http://www.factmonster.com

http://www.parenttoolkit.com

http://www.commoncoreworks.org

http://www.scholastic.com/parents

http://www.wonderopolis.org



Օգնություն ծնողների համար տնային աշխատանքի վերաբերյալ

1. Երեխայի համար լուռ, լավ լուսավորված անկյուն ստեղծել տնային աշխատանք կատարելու համար: Խուսափել հեռուստատեսության մոտ տնային աշխատանք պատրաստելուց, կամ այնպիսի տեղ, որտեղ անցուդարձը շատ է:
2. Համոզվել, որ երեխան ունի իրեն անհրաժեշտ նյութերը, որոնցից են թուղթը, մատիտը, ջնջոցը և այլն: Հարցնել երեխային, եթե նրան հատուկ նյութեր են հարկավոր որևէ նախագծի համար և նախապես գնել դրանք:
3. Օգնել երեխային ճիշտ ձևով օգտագործել ժամանակը: Սովորություն դարձնել ամեն օր նույն ժամին կատարել տնային աշխատանքը: Թույլ չտալ, որ երեխան տնային աշխատնքը կատարի քնելուց անմիջապես առաջ: Օրացույց կամ օրագիր պահել երեխայի մասնակցելիք միջոցառումները գրանցելու համար: Մտածել այն մասին, որ կարող եք մեծ նախագծերի վրա աշխատել շաբաթ կամ կիրակի օրերին, հատկապես, եթե այն պետք է կատարել համադասարանցիների հետ:
4. Օրինակ ծառայել: Երբ երեխան տնային աշխատանք է կատարում, դուք ևս զբաղվեք տնային գործերով: Եթե երեխան կարդում է՝ դուք էլ կարդացեք: Եթե երեխան մաթեմատիկայի տնային աշխատանք է կատարում՝ դուք էլ զբաղվեք տնային հաշիվներով: Ցույց տվեք ձեր երեխային, որ իր սովորածը պետք է գալու իրեն, երբ չափահաս դառնա:
5. Ցույց տալ օգնություն և ոչ թե պատասխան: Երբ երեխան օգնություն է խնդրում, բացատրել նրան և ոչ թե տալ խնդրի պատասխանը: Երեխան չի սովորի, եթե հրամցնեք նրան պատասխանները: Բավականին շատ օգնություն ցույց տալը կսովորեցնի երեխային, որ դժվար պարագային մեկը միշտ իր համար կատարելու է իր աշխատանքը:
6. Հետևել երեխային ձախողման և հիասթափության նշանները տեսնելու համար: Ընդմիջում տալ, եթե զգում եք, որ երեխան չի կարողանում կենտրոնանալ: Թույլ տալ երեխային զբաղվել ֆիզիկական վարժություններով, օրինակ՝ վազել կամ թռչկոտել, որը կլիցքավորի նրան:
7. Տեղեկացված եղեք: Խոսել երեխայի ուսուցչի հետ: Համոզված եղեք, որ հասկանում եք տնային աշխատնքի նպատակը և երեխայի դասարանի օրենքները:
8. Պարգևատրել երեխային տնային աշխատնքը վերջացնելիս: Եթե երեխան հաջողությամբ է ավարտում տնային աշխատանքը և ջանասիրաբար է աշխատում, տոնեք այն հատուկ միջոցառմամբ (ընթարցեք նրա հետ, զբոսանքի գնացեք կամ այգի հաճախեք, և այլն):

Հասկանալ Ընդհանուր Հիմնական Չափանիշների Գնահատականների Թերթիկը

Կալիֆոռնիայի նահանգը հանդիսանում է 45 նահանգներից մեկը, որը ընդունել է Ընդհանուր Հիմնական Չափանիշները: Այս չափանիշները նկարագրում են, թե ինչ պետք է իմանա և ինչ պետք է կարողանա անել աշակերտը ուսումնական տարվա վերջին, մաթեմատիկայից և ընթերցանությունից: Ընդհանուր Հիմնական Չափանիշները մշակված են նախատեսելով իրական աշխարհը, արտացոլելով այն գիտելիքները և հմտությունները, որոնք հարկավոր են երեխաներին համալսարանում և մասնագիտություն ընտրելիս հասնել հաջողության:

Աշնանը մեր դպրոցական շրջանը ներկայացնում է գնահատականների նոր թերթիկներ՝ համապատասխանեցնելով դրանք Ընդհանուր Հիմնական Չափանիշների հետ: Թերթիկներն ունեն նոր հատկանիշներ, որոնք կարող են շփոթեցնող լինել առաջին հայացքից:

<u>Գնահատականներ դասերի համար.</u>
Մենք շարունակելու ենք օգտագործել 1-4 գնահատականների համակարգը, որպես յուրաքանչյուր առարկայից ստացած ընդհանուր գնահատական, բայց փոփոխվել է դրանց նշանակությունը.

2017-2018		Մինչև 2017-2018	
4	Գերազանցում է դասարանի մակարդակի չափանիշին	4	**Մանրակրկիտ.** Անընդհատ խորը իմացություն է ցուցադրում և ճկունորեն է օգտագործում դասարանի մակարդակի հասկացությունները
3	Դասարանի մակարդակի չափանիշին հավասար է	3	**Համապատասխան.** ցույց է տալիս դասարանի մակարդակի հասկացությունների ըմբռնում և օգտագործում
2	Առաջընթաց է ցուցադրում հասնելու չափանիշին	2	**Մասնակի.** Ցույց է տալիս դասարանի մակարդակի հասկացությունների անավարտ կամ անհամապատասխան ըմբռնում և օգտագործում
1	Ամենաքիչ առաջընթացն է ցուցադրում	1	**Նվազագույն.** Ցույց է տալիս դասարանի մակարդակի հասկացությունների նվազագույն ըմբռնում և օգտագործում
*	Նայել ակնարկների բաժնին/ IEP գնահատականների թերթիկին		
✓	Ինչի՞ կարիք ունի երեխան:		
N/A	Առայժմ չի գնահատվում		

<u>Սովորույթները և շփումը այլ աշակերտների հետ</u>
Գնահատականների թերթիկի հաջողության սովորույթներ բաժինին փոխարինելու է եկել սոցիալական, կարգապահության և ուսման հմտություններ բաժինը:
Ըստ պահանջի, ուսուցիչը կարող է նշանակել C = անընդհատ ցուցադրում է, S = հաճախակի է ցուցադրում կամ R = հազվադեպ է ցուցադրում գնահատականները:

<u>Անգլերեն Լեզվի Զարգացում</u>
Անգլերեն Լեզվի Զարգացման ծրագրում սովորող աշակերտները կգնահատվեն միայն 3-րդ եռամսյակի ընթացքում, շփվել իմաստալից ձևով և ինչպե՞ս է օգտագործվում անգլերեն լեզուն բաժիններում: